

3564

3565

3566

3567

3568

3569

Сборник рассказов

9(47.925)

2-24


2012

9(92) ||



ԳԼԱԴՍՈՒ

1408
32446




ԲՈՒԺՈՒ
Տպարակ „Արթուր“
1896.

Дозволено цензурою, 7 ноября 1896 года, г. Тифлисъ.

115344 - 42



37046



Типография
„Афоръ“

ԳԼԱԴԻՍՈՒ



Գլադիսոնի արտաքին կեանքը ներկայացնում է քաղաքական հերոսութիւնների մի ամբողջ հիւսուածք, ուր խառն է ոչ միայն իւր հայրենիքի փառքը, այլև գուցէ ամբողջ աշխարհի քաղաքական խոշոր երեսյթների լաւագոյն իմաստը։ Գլադիսոնի ներքին կեանքը պատկերացնում է մի հարուստ պատմութիւն, ուր իրազործուած ենք տեսնում շատ քրիստոնէական և մարդասիրական գաղափարներ։

Կան մարդիկ, որ մեր գարի քաղաքական նշանաւոր գործիչների մասին խօսելիս—Գլադիսոնի մեծութեան հետ հաւասարեցնում են Բիամարկի մեծութիւնը։ Համարելով մեր ժամանակի այդ երկու հոչակաւոր ծերունիներին երկու միանկամայն հակառակ ուղղութիւնների ներկայացուցիչներ, այդ մարդիկ, մի և նոյն ժամանակ, նրանց բարոյական ուժերի մէջ զբանում են քանակական հաւասարութիւն։ Սակայն եթէ մարդու բարոյական մեծութիւնը որ և է կապ ունի նրա սրտի ընդարձակութեան, հոգու անվեհերութեան և ձգտումների մաքրութեան հետ, եթէ մեծ պիտի համարվի նա, որ գաւանում է մեծ գաղափարներ, այն ժամանակ Բիսմարկի անունը չը պիտի

յիշվի այնտեղ, ուր խօսվում է Գլազոստոնի մասին: Ինչպէս փոքրոգութիւնը վեհանձնութեան և նեղ շահամոլութիւնը քրիստոնէական սիրոյ ընկեր չի կարող լինել, նոյնպէս և Բիսմարկի անունը չի կարող ընկերանալ Գլազոստոնի անուան հետ:

Եւ հէնց Գլազոստոնի մեծութեան բուն իմաստը այն է, որ նա ներկայացնում է Բիսմարկի հակապատկերը, որ նա իւր գոյութեամբ, իւր գաղափարներով քստմնելի է դարձնում Բիսմարկների կոշտ ու կոպիտ սկզբունքների raison d'ètre-ը: Արդարե, եթէ պէտք է խոնարհվել այն մեծ մարդու առջե, որի ամբողջ կեանքը և գործունէութիւնը հիմնված են բուն քրիստոնէական և մարդասիրական վարդապետութեան վրայ, միթէ յանցանք չէ նոյն «մեծ» անունը շռայլել մի ուրիշ, թէն դարձեալ նշանաւոր, բայց բացասական գործիչի, որ դեռ նորերումս, երբ արդէն մի ոտը գերեզմանի մէջ է, առանց քաշվելու, առանց խղճահարութեան մի ամբողջ հալածված ժողովը—կրետացիների վիճակը աւելի ստոր ուշադրութեան արժանի համարեց, «քան իւր այգու մի բուռն հողը»: Եւ միայն միխտարիկմի ներկայ տիրապետութեան ժամանակ մարդիկ կարող են այդ տեսակ վայրենի խօսքեր արտասանող ավտորիտետի մասին դեռ հրճուանքով խօսել և միայն տպէտները կարող են նրան «մեծ» համարել:

Գլազոստոնի արիստօկրատ թշնամիները սովորութիւն ունին ակնարկել, թէ նրա հայրը վաճառական է եղել, թէ նրա ծագումը արիստօկրատիական չէ: Բայց ինքը Գլազոստոնը ոչ միայն չի վիրաւորվում այդ տղայամիտ ակնարկներից, այլև բացարձակ պարձենում է իւր ծագումով: Այն մարդիկն են արժանի հիացման, որոնք սեպական ուժերով են իրանց համար ճանապարհ հարթել կեանքի ասպարիզում: Զգենք մի թեթե հայեացը Գլազոստոնի հարսւստ և բազմակողմանի կենսազրութեան վրայ և մենք կը տեսնենք, որ իրաւ այդ մեծ մարդը միայն իւր խելքին, տաղանդին և աշխատասիրութեանն է պարտական իւր այժմեան հոչակով:

Վկիկամ Եվգարտ Գլազոստոնը ծնվել է 1809 թուականին Անգլիայի կենտրոնական քաղաք Լիվերպուլում *): Ուրեմն այժմ նա 87 տարեկան է. նա, որ այսօր էլ դեռ չի յոդնում իւր ազգու ձայնը բարձրացնել ճնշվածների և հալածվածների համար: Ճշմարիտ է, Գլազոստոնի հայրը, նոյն խակ պապը և մեծ պապը եղել են վաճառականներ, բայց և այնպէս նրա երակների մէջ հոսում է հին արիստօկրատիական արիւն: Տասնուերեքերորդ դարում նրա նախանայրերը եղել են Շոտլանդիայի Եղուարդ և թագաւորի ասպետները: Նրանք Լանարկ-շիրում ունեցել են սեպական կալուած, որ կոչվել է «Գլէդստէյնս», այսինքն բաղէի ժայռեր: Դժուար չէ գուշակել, որ հէնց այս անունից է ապագայում առաջացել Գլազոստոն աղջանունը: Յետոյ միայն, երբ ասպետները, հանդիպելով ճակատագրի հարուածներին, զրկվել են իրանց գիրքից, կորցրել են իրանց կալուածը, նրանց ժառանգները սկսել են առետը-րով պարապել:

Դեռ անցեալ դարի վերջերում Գլազոստոնի պապը, Թովմաս Գլազոստոնը, Լէյդ կոչված նաւամատոյցում հացի առեսուր էր անում: Նա մեռաւ, իւր 16 զաւակների համար թողնելով բաւական մեծ ժառանգութիւն: Թովմասը յայտնի էր իւր եռանդուն, ձեռնարկով և վճռողական բնաւորութեամբ, որ բնական խելքի հետ միացած մի առանձին զիրք էր տալիս նրան իւր շրջանում: Նոյն յատկութիւնները ժառանգում է հօրից նրա աւագ որդին—Զօնը, այժմեան մեծանուն ծերունու հայրը:

Ահա ինչ է ասում ինքը Գլազոստոնը իւր հօր մասին. «Նոյն իսկ ծերութեան հասակում նրա աշքերը չը կորցրին իրանց երիտասարդական փայլը: Երբէք նրա մէջ չէր նկատվում ֆիզիքական կարողութեան թուլացում: Միշտ լեցուն մտաւոր և մարմնաւոր ոյժերով, նա գործում էր անլուգնատ և զսրծում էր ամբողջ եռանգով: Նրա համար անհասկանալի էին այն մարդիկ, որոնք, աչքի առջև ունենալով մի որևէ լաւ զործ, իսկոյն և եթ ամենառանգուն կերպով շեին ձեռնարկում այդ զործը:

*) Ներկայ կենսագրութեան նիւթերը բաղել ենք Պավլենկովի նրատարակութիւնից:

Տոկունութիւնը նրա մէջ միացած էր զերմ սրտի և մտերմական զգացմունքների հետ: Նա չափից գուրս պարզասիրտ էր, ունէր հասարակ բնաւորութիւն, սիրում էր ու հասկանում հումօրը, որի մէջ և գտնում էր հանգստութիւն: Ես չեմ յիշում մի ուրիշ ծերունի, որ այնքան հետաքրքրական լինէր ինձ համար, որքան նա, և այդ ոչ այն պատճառով, որ նա իմ հայրն էր»:

Միայն առևտրական գործերը չէին, որ զբաղեցնում էին Գլադստոնի հօրը: Նա, մինոյն ժամանակ, և հասարակական և քաղաքական գործիչ էր: Բաւական է ասել, որ նա ինն տարի անգլիական պարլամենտի անդամ է եղել, պատկանելով վիկերի, այսինքն աղաստամիտների կուսակցութեան: Իոլ արտաքին քաղաքականութեան վերաբերմամբ նա եղել է կողմնակից այն մտքի, թէ Անգլիան միշտ պէտք է ճնշված ժողովուրդների պաշտպան լինի: Բայց ժամանակը աղդել է Զօնի վրայ, և նա ծերութեան հասակում փոխել է իւր հայեցքները, չափաւորելով իւր գաղափարների աղատամութիւնը:

Ընտանեկան և ընկերական կեանքում Գլադստոնի հայրը եղել է վերին աստիճանի ճշտասէր, սիրել է երկար վիճարանել և ճառախօսել: Նոյն յատկութիւնները նա աշխատել է պատուաստել և իւր գաւակներին: Ամեն մի սկսած գործ նա անպայման տարել է մինչև վերջը, մինոյն է, լաւ է եղել այդ գործը, թէ վատ:

Գալով Գլադստոնի մօրը, ծնեալն Աննա Ոօրերտսոնին, որ նոյնպէս վաճառական ընտանիքի գաւակ է եղել, թէև մի նշանաւոր շօլանդական լեռնական ցեղից, այդ կինն էլ իւր մտաւոր ուժերով, կրթութեամբ և տակտով թողել է նախանձելի յիշատակ: Նա զրաւիչ է եղել իւր տաք բնաւորութեամբ, զառվառն երեակայութեամբ, զգայուն սրտով, յատկութիւններ, որոնք ժառանգաբար անցել են նրա անուանի որդուն:

Մինչեւ տասներկու տարեկան հասակը Վիլեամ Գլադստոնը կրթվել է իւր ծնողների մօտ, նրանց անմիջական հսկողութեան ներքոյ: Այստեղ է գրվել նրա աղնուական բնաւորութեան հիմ-

քը: Սյնուհետև նրա հայրը, տեսնելով իւր որդու խոշոր ընդունակութիւնները, շտապել է ուղարկել նրան Խթօնի ուսումնարանը, որ գտնվում էր Լոնդոնից երեսուն վերստ հեռու, Վինձօրի ամրոցի մօտ: Այստեղ արդէն ուսանում էին Գլադստոնի երկու մեծ եղբայրները:

Խոկապէս այդ ուսումնարանում, որ համարվել է միջնակարգ, ոչ մի լուրջ կրթութիւն չի եղել: Շաբաթուայ ընթացքում, բացի կիրակիններից, այնտեղ մի օր տօն է եղել, երկու օր կիսատօն: Մնացած ժամանակ աշակերտները պարապել են ընդամենը $2\frac{1}{2}$ ժամ օրական, այն էլ բացառապէս սովորելով հին լեզուներ: Նոյն իսկ թուաբանութեան չորս կանոնները այդ ուսումնարանում օրինաւոր կերպով չեն աւանդվել: Աշակերտները, մեծ մասամբ արխտուկրատ ընտանիքների զաւակներ լինելով, աւելի սիրել են յաճախել ձիարշաններ, ներկայ լինել աքաղակների կուրուներին, թատրոնական հանդէսներին, քան իրանց դասերին: Ամեն ոք աշխատել է, որքան կամեցել է: Ընդունակ աշակերտների համար չի եղել ոչ մի պարգև, իսկ անընդունակները դասատները փոխել են իրանց ուսման տարիների համապատասխան:

Հասկանալի է, որ մի այդպիսի կրթական հիմնարկութեան մէջ աշակերտների ինքնուրոյնութեան համար մեծ ասպարէզ պիտի լինէր: Նա, որ բնականից եղել է ծոյլ, անընդունակ—ոչինչ չի սովորել: Հասկանալի է նաև, որ միայն Գլադստոնի պէս մի աշխատասէր և ընդունակ մանկան համար այդ դպրոցը կարող էր դառնալ իսկական դպրոց:

Բայց իւր վատ կողմերի հետ Խթօնի դպրոցը ունեցել է և մի լաւ կողմ: Դա այն է, որ լաւագոյն աշակերտները պատէին պարապել, բացի դասերից, իրանց սիրած այս կամ այն կողմնակի գործով: Այդպէս, դպրոցը ունէր աշակերտների համար մի տեսակ քաղաքական կլուստ, ուր զանազան հասարակական և քաղաքական խնդիրների մասին վիճում էին ու ոգեստագած ճառախօսում: Կար թատրոն, ուր աշակերտները

ներկայացումներ էին տալիս, կար, վերջապէս, մի սպարզերական հանդէս, ուր ամեն ոք կարող էր փորձել իւր գրականական ոյժերը:

Գլագուտօնը շուտով միանալով դպրոցի լաւագոյն աշակերտների հետ, կազմում է մի առանձին խումբ, որ թէ իւր բարոյական արժանաւորութիւններով և թէ աշխատասիրութեամբ տարբերվում է միւսներից: Տասնուրից տարեկան հասակումնագունում է կլուրի անգամ և շուտով այնտեղ այնպիսի դիրք է ստանում, որ ընտրվում է նախագահ: Այդ ժամանակ նա առաջին անգամ արտասանում է հրապարակական ճառ, որ իսկոյն արտայայտում է նրա հռետորական ձիրքը: Երկու տարի անցած նրա խումբը հիմնում է մի նոր ամսագիր, և Գլագուտօնը ընտրվում է խմբագիր: Նա ինքն է կազմում ամսագրի մեծ մասը: Նա գրում է առաջնորդողներ, պատմական և երգիծաբանական յօդուածներ, ոտանաւորներ և այլն: Նա է խմբագրում և տպագրում ամբողջ ամսագիրը: Եւ պէտք է զարմանալ, թէ ինչպէս մի 17 տարեկան պատանի կարողանում է թէ իւր դասերը պատրաստել և թէ այդքան գործ կատարել: Պատմում են, որ նրա հայրը, առաջին անգամ նկատելով որդու այդ աշխատասիրութիւնն ու տոկունութիւնը, բացականչում է. «այդ մարդը շատ առաջ կերթայ»:

Աւարտելով Իթօնի դպրոցի գասլնթացքը, Գլագուտօնը երկու տարի նախապատրաստվում է և ապա միայն մտնում Օքսֆորդի համալսարան, թէ առանց պատրաստվելու էլ կարող էր դիւրութեամբ ընդունվել: Անմիջապէս նա արժանանում է «ստուգենտ» կոչմանը, ստանալով տարեկան 1000 լուրի թօշակ, որին բնաւ կարիք էլ չի ունենում: Համալսարանում, ինչպէս և Իթօնի դպրոցում, Գլագուտօնը գիտութիւններով զբաղվելը զերադասում է զուարձալի հանդէմներին, ձիարշաներին և այլ այդպիսի բաներին, որոնցով յափշտակված էր այդ ժամանակուայ ուսանողութիւնը:

Նա աշխատում է անընդհատ և անգուլ, բայց, միենոյն

ժամանակ, չի զրկում իրան եւ ընկերական խնջուքներից: Ընկերական կեանքում նա ցոյց է տալիս վերին աստիճանի ճշտասիրութիւն և անհաշուռութիւն: Նա սիրում է հակառակորդին յաղթել խելացի վիճաբանութեամբ, փաստերի և արկումնենտների ուժով: Եթէ որեէ խնդրում զգում է հակառակորդի արդարութիւնը, անմիջապէս խոստվանում է իւր սխալը և հաշտվում: Հասարակական խնդիրների մասին վիճելիս շատ անգամ է դատապարտում իւր հայրենակիցներին, երբ համոզմամբ սխալ է համարում նրանց արածը:

Շուտով Գլագուտօնը Օքսֆորդում ուսանողներից կազմում է մի ընկերութիւն զանազան ոչ—համալսարանական խնդիրների մասին յօդուածներ զրելու նպատակով: Այդ ընկերութեան մէջ նա, ի միջի այլոց, կարգում է իւր մի լուրջ յօդուածը «Սոկրատէսի հաւատի մասին դէպի անմահութիւնը»: Բացի դրանից, նա մասնակցում է Օքսֆորդի Union-ին, որ ուսանողական պարլամենտ էր այն ժամանակ: Այստեղ կային զանազան կուսակցութիւններ, բայց ուսանողների մեծամասնութիւնը արխտոկրատիական և պահպանողական ուղղութեան կողմնակից էր: Կրաքանչկւր կուսակցութիւն ունէր իւր առանձին ժողովը, իսկ Union-ը ընդհանուր ժողովարան էր: Այստեղ վիճում էին, ճառաբանում, խնդիրներ լուծում, որպէս մի խոկան պարլամենտում: Մի խօսքով, գա մի տեսակ նախապատրաստական դպրոց էր, ուր իրանց ուժերը, զարգացնում էին ապագայ քաղաքական գործիչները:

Գլագուտօնը ընտրվում է նաև՝ Union-ի քարտուղար, ապա նախագահ: Իւր զարմանալի ընդունակութեամբ նախագահի պաշտօնը վարում է այնքան աջող, որ անմիջապէս Օքսֆորդի քաղաքական կուսակցութիւնների մէջ բռնում է նշանաւոր տեղ: Կոկ նա միայն 20 տարեկան էր այդ ժամանակ: Ուղղութեամբ պատկանելով պահպանողական կուսակցութեան, 1831 թ. ապրիլին արտասանում է մի նշանաւոր ճառ անգլիական պարլամենտի ազատամիտ կուսակցութեան առաջարկած ուժօրմների դէմ: «Ուժօրմները, զոշում է նա, կառաջացնեն վարչական ձեերի փոխութիւն և կը խախտեն հասարակական

կարգի հիմքը»։ Նիւկաստի գուքսի որդին, որ այդ ժամանակ Օքսֆորդի ուսանող էր, այդ ճառի տպաւորութեան տակ, Գլադստոնի մասին մի գովասանական նամակ է զրում հօրը։ Հետեւալ տարին, երբ Գլադստոնը աւարտել էր իւր ուսումը, գուքսը նրան առաջարկում է իւր ընտրողական շրջանին իրեն թեկնածու։

Եւ 22 տարեկան տաղանդաւոր հոետօրը, 1832 թուականին, դեռ նոր բաժանված ուսանողական նստարանից, ընտըրվում է անգլիական պարլամենտի անդամ։ Նա աւարտում է իւր ուսումը փայլուն կերպով, ստանալով կրինակի պարզի, մի բան, որ իւրաքանչիւր տարի համալսարանը տալիս էր միայն մի աւարտողի, այն էլ մեծ գժուարութիւններով։

Աւարտելուց յետոյ Գլադստոնը անմիջապէս ուզնորվում է Դտալիա, բայց երբ ստանում է Նիւկաստի գուքսի հրաւերը, անմիջապէս վերագանում է իւր հայրենիքը։ Քսան ու երկու տարեկան առողջ, զեղեցիկ և եռանդուն երիտասարդը, ընդունված սովորութեան համեմատ, իւր ընտրողների առջև կարգում է մի ճառ, որով պարզում է իւր քաղաքական դաւանակը։

Հետաքրքրական է այդ գաւանանքը։ Թէ կ Գլադստոնը ընտրողների առջև իրան ներկայացնում է որ և է կուսակցական հոգուց զերծ և անկախ, բայց արդէն նոյն իսկ ճառի միաբը ցոյց է տալիս, թէ որքան այն ժամանակուայ Գլադստոնը տարբերվում էր այժմեան առաջադէմ և նոյն իսկ արմատական Գլադստոնից։ Նա մինչև անգամ պաշտպանում է այդ ժամանակ ստրկութիւնը անգլիական կօլոնիաներում։ «Ես համաձայն եմ, ասում է նա, որ մարդկանց ֆիզիքական և բարոյական կախումը միմեանցից վաղ թէ ուշ պէտք է ոչնչանայ, բայց ամբողջ խնդիրը կայանում է նրանում, թէ ինչ ուղղութեամբ պէտք է այդ բանը կատարիլ»։ Գլադստոնի կարծիքով, Սրենեան-Հնդկաստանի ստրուկ—նեղըերին նախ և առաջ հարկաւոր է աղատել բարոյապէս, գարձնելով նրանց քրիստոնեայ,

ապա ֆիզիքապէս։ Բայց դա մի մանեօվը էր, որով երիտասարդ քաղաքագլուխը ուզում էր քողարկել իւր յետաղիմական դաղավիարը . . .

Սյն նախապատրաստական ժողովում, ուր Գլադստոնը պաշտպանում է իւր այս քաղաքական ուղղութիւնը, նրա դէմ բարձրամենում են հաղարաւոր ձեռներ։ Բայց ինչ օգուտ, քանի որ տեղական ազգարնակութեան ձայնը այդ ժամանակ անզօր էր ընտրողական զործում։ Բաւական էր, որ Գլադստոնի թեկնածութիւնը ամենազօր գուքսն էր առաջարկել, և նա պիտի ընտրվէր, չը նայելով, որ նրա քաղաքական հայեացըները միանգամայն հակառակ էին ժողովրդի կամքին։

Պարզ էր, որ այս եղանակով ընտրված մի պատգամաւոր պարլամենտում պիտի տեղ բռնէր աշակողմեանների շարքում։ Եւ նա բռնեց այդ տեղը, և հէնց առաջին քայլում քացարձակ պաշտպանեց ստրկութեան խնդիրը։ Նա պաշտպանեց յետոյ և ուրիշ մի քանի յետաղիմական խնդիրներ։ Ի միջի այլոց, երբ պարլամենտի յետաղէմ կուսակցութիւնը առաջարկեց ապրուտամբված Դրանդիային խաղաղացնել զէնքի ուժով, նա լուսվեամբ ընդունեց այդ առաջարկութիւնը։ Բայց ինչ պահանջական կամ յետաղիմական խնդիր ևս պաշտպանէր, Գլադստոնի ճառերը այնքան անկեղծ, ազգու և տաղանդաւոր էին, որ նոյն իսկ ծայրահեղ հակառակորդները չէին ուրանում երիտասարդ հսետօրի պարզութիւնը, անկեղծութիւնը և պերճախօսութիւնը։

Անգլիայի այդ ժամանակուայ մինիստրութիւնը բարկացած էր վիզերից։ Շուտով պարլամենտում և հասարակական շրջաններում ծագեց կարգացաւ նրա դէմ գժունութիւն, այնպէս-որ մինիստրութեան զլուս Գրէյլ ստիլիզեց իւր կարինէթի հետ միասին հրաժարական տալ։ Նոր կառավարչութեան զեկը յանձնվեց Թօրէյտ Պիլին, որ յայտնի էր իրեն չափաւոր պահպանողական և լաւ աղմինիստրատօր։ Պիլը առաջարկեց Գլադստոնին ֆինանսների մինիստրի օգնականի պաշտօնը։

Բայց հին պարլամենտը լուծված էր, ուստի Գլագոլոսիլ պիտի
նորից ընտրվէր պատգամաւոր:

Սյս անգամ իւր ընտրողների առջև արտասահմած ճառում
նա յայտնեց այն միտքը, թէ պետութեան և եկեղեցու խելա-
ցի ու եֆօրմները չեն հակասում իսկական պահպանողականու-
թեան ոկզբունքներին: Սյսպիսով նա մի քայլ հեռացաւ պահ-
պանողական—յետադիմականներից և մօտեցաւ առաջադէմների
կուսակցութեան: Նա նորից ընտրվեց պատգամաւոր և յանձն
առաւ ֆինանսների մինիստրի օգնականի պաշտօնը: Բայց եր-
կար չը տեսեց Թօքերտ Պիլի մինիստրութիւնը և 1835 թուա-
կանի ապրիլին հրաժարական տուեց, նրա հետ միասին, հար-
կաւ, և Գլագոլոսը:

Կարճ տեսեց նրա պաշտօնը, բայց և այնպէս, այդ կարճ
միջոցում նա ցոյց տուեց իւր քաղաքիտական ու գործնա-
կան ընդունակութիւնները և անսահման եռանդը: Այնուհետեւ
երկու տարի շարունակ նա վարեց լոկ պարլամենտական կեանք,
անընդհատ աշխատելով այս կամ այն խնդիրների համար կազ-
մված մասնաժողովներում: Չը նայելով իւր դրազմունքներին,
նա ժամանակ էր գոնում ուսումնասիրել Հոմերոսին, Դան-
թէին և սուրբ Օգոստինոսին: Յետոյ նա հետաքրքրվեց այն
կրօնական շարժումով, որ այդ ժամանակ սկսվել էր Անգլիա-
յում ապագայ կարգինալ Նիւմանի չնորհով: Հետևանքն այն
եղաւ, որ 1838 թուականին Գլագոլոսը հրաժարակեց իւր
առաջին քաղաքական բրօշիւրը «Պետութեան յարաբերութիւնը
եկեղեցու հետ» խորագրով:

Սյս բրօշիւրի մէջ երիտասարդ և վառվուն քաղաքիտը
այն միտքն էր յայտնում, թէ պետութիւնը «խիղճ ունի», ու-
րեմն և պարտաւոր է իւրաքանչիւր քաղաքացու վրայ պարտա-
կանութիւն դնել իւր ուղած եկեղեցին պաշտպանելու: Նա
հանդիսանում էր պետական եկեղեցու կատաղի պաշտպան՝
ընդդէմ ուրիշ դաւանութիւնների: Նրա յետադէմ գաղափար-
ները ենթարկվեցին Մաքոլէի անխնայ քննադատութեանը և
ջարդ ու փշուր եղան: Սակայն քննադատը, յարձակվելով հե-
ղինակի գաղափարների վրայ, չը զլացաւ զնահատել նրա ինք-

նուրոյնութիւնը և տաղանդը: Նա չնորհաւորում էր թօրիների
կուսակցութիւնը, որ Գլագոլոսի մի տաղանդաւոր ար-
քանեակ էր ձեռք բերել: Բայց նա սխալում էր. Գլագոլոսը
նոր ծագող զօրաւոր աստղ էր, միայն ոչ թօրիների համար,
այլ շուտով պիտի փոխէր իւր դաւանանքը և անցնէր հակա-
ռակ բանակը:

Ֆժիշների խորհրդով Գլագոլոսը ուղեորվեց Հոռվմ իւր
աչքերը այնտեղ բուժելու: Այդտեղ նա ծանօթացաւ սըր Ստե-
փիան Գլինի ընտանիքի հետ, որի որդին նրա համալսարանա-
կան ընկերն էր եղել: Այդ ծանօթութեան հետևանքն այն
եղաւ, որ 1839 թուականի յուլիսին վերագալով Անգլիա,
նա ամուսնացաւ Գլինի մեծ դստեր Կատերինայի հետ: Իբրև
օժիտ—նա ստացաւ Հովարդէն ամրոցը: Յաջորդ տարին նա
հրաժարակեց իւր երկրորդ բրօշիւրը՝ «Եկեղեցական սկզբունք-
ները իրանց հետևանքների տեսակէտից» խորագրով: Այստեղ
ևս Գլագոլոսը պաշտպանում էր պետական եկեղեցին: Հետևեալ
տարին Թօքերտ Պիլը նորից կոչվեց՝ երկրի կառավարութիւնն
իւր ձեռքն առնելու, և նա շտապեց յանձնել Գլագոլոսին ար-
դիւնաբերութեան և առևտուրի բիւրոյի նախագահի պաշտօնը:

Այդ այն ժամանակն էր, երբ Անգլիայի տնտեսական
դրութիւնը ամենին խորին մտախոհութիւն էր պատճառել: Եր-
կիրը օրից օր աղքատանում էր, չքաւրութիւնն այն աստի-
ճանին էր հասել, որ պետական գանձարանը ովրմութիւն էր
տալիս մօտ 7 միլիոն հոգու: Շարունակ գիւղերից քաղաքներին
էին զաղթում գիւղական հասարակութիւնները՝ այնտեղ որիէ
զործ գտնելու: Սոսկալի երաշտութեան պատճառով երկիրը
ցամաքել էր, հաց չէր տալիս: Այն ինչ՝ քաղաքներում աշխա-
տաւոր ձեռների առաջարկութիւնը անշափ գերազանցում էր
պահանջին, և մարդիկ հարկադրված էին մուրալով հայթհայթել
իրանց օրուայ պարէնը:

Մի և նոյն ժամանակ, մեծ քաղաքներում և արգիւնաբե-
րական շրջաններում սկսվել էր մի նոր քաղաքատնտեսական

հոսանք: Արհեստաւոր գասակարգը զործ էր պահանջում, սպառնալով գործադրու անել, և թէ տէրութիւնը չի աշխատիլ բարւոքել նրա վիճակը: Միւս կողմից, մի ահազին. բազմութիւնն պահանջում էր ընդհանուր ընտրողական իրաւունք: Իսկ այսպէս անուանված մանչչստերեան քաղաքատնտեսական շփոլայի կուսակցութիւնը կամ «Լիգան», որի ներկայացուցիչն էր պարլամենտում Վիլերսը և հռետօրներն էին Կօրդէնը և Բրայտը—պահանջում էր հացանարկի կատարեալ ոչնչացում, իբրև միակ միջոց, որ, նրա կարծիքով, կարող էր երկիրը ապատել տնտեսական նեղ վիճակից:

Վերջապէս, Ռօբերտ Պիլի մինիստրութիւնը սկսեց զիջումներ անել: Նա վճռեց փոփոխել սակագները: Եւ այս վիթխարի գործը յանձնվեց Գլադստօնին: Հէնց առաջին տարին երիտասարդ ֆինանսիստը ցոյց տուեց իւր անսահման ֆինանսական ընդունակութիւնը: Նա փոփոխեց սակագները, աւելացրեց այս ու այն հարկերը, ովակասացրեց միւսները, աղատեց երկրից զուրս բերվող մեքենաները բոլոր հարկերից, այսպիսով մեծ զարկ տալով Սնուլիայի մեքենագործութեամնը: Երկու տարի չանցած, երկրի տնտեսական կեանքի մէջ նկատվեց զգալի բարւոքում: Թշնամիները հաշտվեցին Պիլի մինիստրութեան հետ: Բայց այդ ժամանակ յանկարծ Գլադստօնը հրաժարական տուեց, չը նայելով իւր անկեղծ բարեկամների թախանձին—մնալ իւր պաշտօնում: Այդ հրաժարականի պատճառն էր Ռօբերտ Պիլի մի կարգադրութիւնը Խրանդիայի վերաբերմամբ, որին հակառակ էր Գլադստօնի խիզդը:

Հրաժարականից մի քիչ առաջ Գլադստօնը հրատարակեց մի նոր բրօշիւր, որի մէջ ընթերցողներին ծանօթացնում էր այն հետեանքների հետ, որ ունեցաւ սակագների փոփոխութիւնը: Եղակացութիւնն այն էր, թէ հէնց որ արդիւնաբերութեան մի որ և է ճիւղ աղատվում է հարկից, անմիջապէս կենդանանում է: «Սյսունետե,—ասում է Գլադստօնը իւր բրօշիւրի վերջում,—ճշմարիտ պետական իմաստութիւնը կայանալու

է ոչ թէ այս կամ այն գասակարգին հովանաւորելու, այլ բանւորներին և արդիւնաբերութիւնը մօնօպօլիայի և արտօնութիւնների կապահերթից աղատելու մէջ:

Այդ բրօշիւրով Գլադստօնը մի քայլ ևս մօտեցաւ առաջադէմ կուսակցութեանը: Ռօբերտ Պիլի վրայ բրօշիւրը գործեց մի որոշ աղգեցութիւն, և նա սկսեց հետզհետէ փոխել իւր ուղղութիւնը: Վերջապէս, նա նորից Գլադստօնին պաշտօնի հրաւիրեց: Սակայն շուտով տեղի ունեցան նոր ընտրութիւններ:

Այս անգամ արդէն Գլադստօնը հրաժարվեց Նիւկաստլի գուքսի շրջանի ներկայացուցիչը լինելուց: Իւր ընտրողներին ուղղած հրաժարականի մէջ նա ասում է, ի միջի այլոց, թէ հրաժարվում է, «խոնարհվելով հասարակական պարտականութեան պարզ և անխուսափելի պահանջին»: Սյստեղ նա առաջին անգամ է խօսում երկրի պահանջներին հպատակվելու մասին:

Նոր ընտրութիւններին, այն է՝ 1847 թուականին, Գլադստօնին վիճակվում է դառնալ Օքսֆորդի համալսարանի ներկայացուցիչ. մի բազգ, որին շատ քերն էին արժանանում: Բաժանվելով թօրիների կուսակցութիւնից, այսուամենայնիւ, նա դեռ չէր միացել աղատամիտների բանակին: Ուստի այս անգամ նա պարզամենում միշին տեղ է բռնում, միանալով պիլականներին, այսինքն Ռօբերտ Պիլի կուսակցութեանը: Եւ այստեղ, մի կողմից, նա, հակառակ իւր անցեալ հայեացըներին, այլ ևս չի ուզում պաշտպանել պետական եկեղեցին, զգալով, որ աննպատակ է այժմ այդ մասին խօսելը, միւս կողմից, հանդիսանում է առաջուայ պէս քանի մի պահպանողական խնդիրների կողմնակից: Իսկ առևտրական օրէնսդրութեան վերաբերմամբ նա միանգամայն անցնում է առաջադէմների կողմը, պահանջելով որ բոլոր անվիական ծովերի գռները բացվեն անխտիր բոլոր օտար նաւերի համար: Սակայն մինչև 1851 թ. նա մ՞նում է լոկ մի հասարակ անդամ պարլամենտի, չունենալով ոչ մի վարչական պաշտօն մինիստրութեան մէջ:

Նոյն միջոցին պարզվում է Գլադստօնի հայեացըլ արտաքին քաղաքականութեան վերաբերմամբ: Նա հանդիսանում է

պարզ, անաշառ և մարդասէր քաղաքականութեան կողմնակից, հակառակ նշանաւոր Պալմերստոնի, որ այժմ առաջին մինիստրն էր և որի միջազգային գործունէութիւնը հիմնված էր ինտրիգների և խարէութեան վրայ: Նա արտայայտում է այն գաղափարը, թէ Անգլիայի կոչումն է՝ պահպանել ազգերի մէջ փոխագարձ համերաշխութիւն և տարածել եղբայրութեան և անկախութեան սկզբունքները:

Հարկաւ, նրա այս մարդասիրական գաղափարը հանդիպում է պարլամենտի նեղ—գործնական մեծամասնութեան թշնամութեանը: Բայց նա չի վհատվում: «Խնայենք տկարին և պաշտպանենք նրան», ասում է Գլազուտնը իւր մի ճառում, «չը խառնվենք ուրիշ ազգերի ներքին գործերի մէջ, չը նկրտենք գառնալ ուրիշների վարժապետն ու քննիչը, անենք նրանց համար այն, ինչ որ կը կամենայինք, որ նրանք անեն մեղ համար»...

Մի առ ժամանակ Գլազուտնը ստիպված է լինում, իւր վեց տարեկան ազգայ հիւանդութեան պատճառով, ընդհատել իւր պարլամենտային գործունէութիւնը և ուղևորվել Խտալիա: Զմեռը 1850—51 թ.թ. նա անց է կացնում նէապօլում: Այստեղ վախճանվում է նրա սիրելի գուտարը, բայց վշտացած հայրը շուտով մխիթարութիւն է գտնում մի մարդասիրական գործի մէջ, որ կլանում է նրա միտքը ամբողջովին:

Բանն այն է, որ այդ ժամանակ նէապօլ գտնվում էր կատարեալ սարսափի մէջ: Զը նայելով, որ քաղաքացիները ունէին եւ սեպհական օրէնտղական ժողով եւ օրէնքներ եւ անհատական իրաւունքներ եւ աղատամիտ սահմանադրութիւն, բայց իրօք զրկված էին այդ բոլոր արտօնութիւններից: Պալատի դիմադրական կուսակցութեան անդամները բանտարկվում էին, ինքը պալատը լուծված, քսան հազար քաղաքացիներ գտնվում էին ամենաանտանելի պայմանների մէջ: ամբողջ նէապօլիտանեան թագաւորութեան վիճակը խղճալի էր: Այդ բոլորը տեսնելով, Գլազուտնը յուղվում է և բորբոքվում: Նախ

և առաջ, իր բարեկամների միջնորդութեամբ իրաւունք է ստանում՝ այցելել բանտերը և տեսակցել բանտարկված պատգամաւորների հետ: Այսաեղ նա հաւաքում է անհրաժեշտ տեղեկութիւններ բաղաքացիների վիճակի մասին և անմիջապէս այս առիթով անգլիական մի լրագրում հրատարակում է երկու յօդուած: Նա նկարագրում է նէապօլիտանեան տէրութեան անխիզճ վարմունքը իւր հպատակ քաղաքացիների հետ և անխնայ պարսաւում նրա ամբողջ վարչական սիստեմը:

Անգլիայում այդ յօդուածները խոր տպաւորութիւն են գործում և խախտում են նէապօլիտանեան թագաւոր Ֆերդինանդի հանգստութիւնը: Պարլամենտում այս մասին խնդիր է ծագում, և Անգլիայի ազգային ներկայացուցիչները իրանց յատուկ զգայնութեամբ բողոքում են օտարազգի հալածեալների վիճակի դէմ: Սակայն նրանց բողոքը գործնական հետեանք չի ունենում: Մի քանի տարի անցած նէապօլի խնդիրը լուծվում է Գարիբալդիի զէնքի ուժով, որ ճնշված քաղաքացիներին ազատում է իրանց անտանելի դրութիւնից:

Գլազուտնը Խտալիայից վերադառնում է Անգլիա այն ժամանակ, երբ Ռոսսելի և Պալմերստոնի հին—ազատամտական մինիստրութիւնը քայլայված էր: Պալմերստոնը հրաժարական է տալիս, և 1852 թ. սկզբին նոր կարինէթի կազմակերպութիւնը յանձնվում է լորդ Դերբիին: Տիրահաչալ Դիզրայէլին (Բիկոնսֆիլդ) հրաւիրվում է ֆինանսների մինիստր և համայնքների պալատի ղեկավար: Լորդ Դերբին փորձում է հրաւիրել եւ Գլազուտնին—գառնալ մինիստրութեան անդամ, բայց Գլազուտնը հրաժարվում է և Դերբիի կարինէթին սկսում է ցոյց տալ զօրեղ ընդդիմութիւն, թէի երկար չի տեսում այդ կարինէթի գոյութիւնը: Այս ընդդիմութիւնը Գլազուտնի դէմ նրա թշնամիների շրջանում առաջացնում է մի մեղադրանք, որ այժմ էլ կրկնվում է, այն է, թէ նա ազատամիտ գարձաւ միայն փառամուրութիւնից դրված է նախանձելով Դիզրայէլիին, որին լորդ Դերբին զերադասել էր նրանից:

Այսպէս թէ այնպէս, հէնց առաջին քայլերից Դիզրայէլին հանդիպում է Գլազուտնի թշնամութեանը. մի թշնամութիւն,

որ փոխադարձ էր և որ տեսց մինչև խորամանկ հրէայի մահը:
Դիզլայէլին յանդուզն էր, ցինիկ, ինտրպիան, ոչ մի միջոցի
առջև կանգ չառնող, երկերեսանի, շողզորթող այնտեղ, ուր
հարկաւոր էր, անխիղճ այնտեղ, ուր կարող էր: Մինչդեռ
Գլազոսոնը պարզաբն է, անաշառ, իւր նպատակին դիմող
ուղիղ և արդար ճանապարհով: Պարզ է, որ այս տեսակ երկու
միմեանց արմատականապէս հակառակ բնաւորութիւնների մէջ
չէր կարող լինիլ որևէ առնչութիւն, մանաւանդ բարեկամու-
թիւն, և չեղաւ էլ:

Նոյն իսկ իրանց քաղաքական գործունէութիւնը նրանք
սկսել են և աւարտել միանգամայն տարբեր ուղղութեամբ:
Դիզլայէլին ասպարէզ է մտել իրքի արմատական և, հետզհետէ
փոխվերով, դարձել է պահապնողական, այն ինչ՝ Գլազոսոնը,
յետադիմական ուղղութիւնից ոկտելով, աստիճանաբար դարձել
է առաջադիմական և շատ անգամ նոյն իսկ արմատական:

Դերբիի կարինէթի անկումից յետոյ, երբ նոր կարինէթ
կազմակերպելը յանձնվում է լօրդ Արերգինին, Գլազոսոնը
հրաւիրվում է ընդունել ֆինանսների մինիստրի պաշտօնը:
Պարլամենտական աւանդութիւնների համաձայն, նոր մինիստրը,
որ եղել էր հակառակ կուսակցութեան պարտութեան պատճառ,
պիտի, մինոյն ժամանակ, դառնար եւ համայնքների պալատի
պարագլուխ: Բայց Գլազոսոնը, ընդունելով մինիստրի պաշտօ-
նը, ազատ մնաց այդ պարագլուխ պաշտօնից, որովհետեւ ըստ
աւագութեան վերջինը տակաւին պատկանում էր Թոսսելին:

Սակայն նոյն իսկ իրքի ֆինանսների մինիստր Գլազոսոնը
անքան օգտակար հանդիսացաւ իւր հայրենիքի շահերի համար,
որքան գուցէ եւ ոչ մինը նրա նախորդներից: Հէնց առաջին
տարին, երբ նա իւր առաջին բիւզէն ներկայացրեց պալատին
և հինգ ժամ շարունակ բացադրեց ու պաշտպանեց նրան,
թշնամինները պինաթափ եղան, իսկ բարեկամները սքանչա-
ցան: Անքան հմտութ, խելացի և տաղանդաւոր էր կազմված
այդ բիւզէն: Ամենքը համոզվեցին, որ երկրի ֆինանսները

գտնվում են ապահով ձեռքում: Բայց և այնպէս Գլազոսոնի
թշնամինները ապահոյում բարդեցին նրա վրայ այն մեղադրանքը,
թէ նա 1852 թ. երկրի մէջ մտցնելով եկամտային հարկը,
խոստացաւ մինչև 1860 թ. վերջացնել այդ հարկը, և իւր
խոստումը չը կատարեց: Սակայն Գլազոսոնը այդ բանում մե-
ղաւոր չէր, որովհետեւ առաջ եկաւ Նրիմի պատերազմը, որ
Անգլիային ենթարկեց 400 միլիոն ըուբլի աւելորդ ծախսերի:
Գլազոսոնը չէր կարող այլ կերպ ծածկել այդ ծախսերը, որոնց
վերարկեմամբ նա մազի մեղաւոր չէր:

Սկզբից և եթ Գլազոսոնը գէմ էր Նրիմի պատերազմին,
բայց չը կարողացաւ նրա առաջն առնել, ինչպէս և նոյնը չը
կարողացաւ անել նոյն առաջին մինիստր լօրդ Արերգինը:
Ահա ինչու լօրդ Արերգինը հրաժարական տուեց, և նոր կա-
րինէթի կազմակերպութիւնը այս անգամ էլ յանձնվեց Պալ-
մերստոնին: Գլազոսոնը, որ Արերգինի հետ հրաժարական էր
տուել, նորից յանձն առաւ ֆինանսների մինիստրի պաշտօնը,
որովհետեւ ոչ ոք չէր ուղում վերցնել այդ պատասխանատու
պաշտօնը, վախենալով Գլազոսոնի անխնայ ըննադատութիւ-
նից—այնքան գորեղ էր վերջինի պատօրիտելը ֆինանսական
գործերում:

Պալմերստոնի կարինէթի գոյութիւնն էլ երկար չը տեսց,
քայլքայլեց: Գլազոսոնը դարձեալ թողից ֆինանսների մինիստրի
պաշտօնը:

Այնուհետեւ նա երեք տարի շարունակ վարում էր ապա-
կեանք: Նրա հոգեկան աշխարհը այժմ այն դրութեան մէջ էր,
որ նա ամեն մի խնդիր կապում էր կղերական սկզբունքների հետ:
Այլ խօսքով, նա դարձել էր չափազանց կրօնական, մինոյն
ժամանակ, կարծես, նորից—պահպանողական: Ահա ինչու նա
ընդդիմացաւ Պալմերստոնի առաջարկած ծրագրին ապահո-
րագնի մասին: Նա տսում էր, թէ ամուսնութիւնը քրիստո-
նէական կրօնի գաղտնի խորհուրդն է» և ոչ թէ մի որիէ
քաղաքացիական գործողութիւն, թէ նա, աստուածային օրէն-
քի համաձայն, անխաւելի է և այլ այսպիսի յետազ-
մական և սահմանափակ բաներ: Բայց այնու ամենայնիւ,

Պալմերստօնի ծրագիրն անցաւ, և ապահարզանը ընդունվեց:

Այնունետեղ Պալմերստօնը, որ նոր էր դարձել գէպի առաջին մինիստրի պաշտօնը, մի նոր և այս անգամ անհեթեթ ծրագիր առաջարկեց—սպանութիւն կործելու համար կազմով զաւադրութեան վերաբերեալ օրէնքը փոխելու։ Այդ ծրագիրը հանդիպեց զօրեղ ընդդիմութեան, իմիջի այլոց, եւ Գլադստօնի կողմից, և տապալվեց։ Պալմերստօնը նորից հրաժարական տուեց, նորից ասպարէղ եկան լորդ Դերբին և Դիզրայէլին։

Գլադստօնը տակաւին անպաշտօն էր, և ահա ինչ է զրում Դիզրայէլին իւր բարեկամներից մէկին. «Որքան կը կամենայի, որ գուք համոզէք Գլադստօնին լորդ Դերբիի կարինէթին մասնակցելու։ Իմ մեղը չէ, որ նա յանձն չառաւ այդ։ Քիչ էր մնում, որ ես ծնկաչոք աղաչէի նրան՝ ընդունել իմ առաջարկութիւնը»։

Պարզ է, որ Դիզրայէլին չէր կարող սիրել Գլադստօնին և ուզում էր իւր կողմը թեքելով, աղատվել նրա զօրաւոր թշնամութիւնից։ Գլադստօնը, հարկաւ, չը համաձայնվեց լորդ Դերբիի կարինէթին մասնակցելու...»

Առաջ Գլադստօնը իւր աղատ ժամերը նուիրում էր առաւածաբանական գրքերին, ուսումնասիրում էր հին կտակարանը։ Այժմ նա սկսեց կարգալ Հոմերոսին, նաև ուրիշ հին յունական կլասսիկներին և 1858 հրատարակեց իւր «Հետազոտութիւն Հոմերոսի և նրա դարի մասին» վերնագրով աշխատութիւնը։

Մինչ այս մինչ այն, Եւրոպայի քաղաքական հորիզոնի վրայ կուտակվում էին մթին ամպեր, որ զուշակում էին որոտում և փոթորիկ։ Աւտորիայի և Ֆրանսիայի յարաբերութիւնները օրից օր լարվում էին։ Խտալիայի թագաւոր Վիլտոր Էմմանուէլը և նրա մինիստր Կավուրը, հանգամանքներից օգտվելով, Նապոլէոնի զօրքերի օգնութեամբ, աւտորիայիներին վռնդում են Լոմբարդիայի սահմաններից։ Գարիբալդին արշաւում է և մտնում երկու Սիցիլիաների թագաւորութեան

սահմանները, վոնդում է այնտեղից նէտաղօլիտանեան թագաւոր Ֆերդինանդին և հրատարակում է ամբողջ Խտալիայի միութիւնը։

Այս բոլորի ազգեցութեամբ անզիական հասարակութեան միտքը նորից զրգութում է։ Նորից խնդիր է ծագում ընդհանուր ձայնատութեան, պարլամենտի ռեֆօրմի, բանադրութեան ընտրողական իրաւունքների մասին։ Լորդ Դերբիի և Դիզրայէլիի կարինէթը հարկադրվում է զիջել հասարակութեան պահանջներին։ Այստեղ առաջին անգամ Դիզրայէլին փորձում է իւր կուսակցութիւնն այնպէս կրթել, որ նա ինքը կամաւորապէս իրավործէ ազատամիտ ռէֆօրմները, փոխանակ թոյլ տալու, որ նոյնն անէ ազատամիտ կուսակցութիւնը։ Սյսպիսով նա, մի կողմից, ուզում է գեմօկրատիայի համակրութեանը արժանանալ, միւս կողմից, թուլացնել մտցնելիք ռէֆօրմների ոյժը։ Ի միջի այլոց, խորամանկ քաղաքագէտը յայտարարում է, թէ կամենում է ընդարձակել ընտրողական իրաւունքը։ Նա առաջարկում է մի ծրագիր, որով իւրաքանչւր մարդ, որ ունի տարեկան 100 բուրլի եկամուտ իւր զրամագլխից կամ 200 բուրլի պենսիօն, ստանում է ընտրողական իրաւունքը։ Նոյն իրաւունքը ստանում են նաև համալսարանականները, քահանաները, բժիշկները, իրաւարանները և այլն։ Բայց իրօք զա մի ծրագիր է լինում, որով առաջարկվում է հիմնել մի բաւական բարձր կրթական և նիւթական ցէնզ ընտրողների համար, մինչզեռ ժողովուրդը պահանջում էր լիակատար և անպայման ընտրողական իրաւունքը։

Դիզրայէլիի այս կիսաւագատամիտ ծրագիրը ընդունելութիւն չի գտնում ոչ աղատամիտների և ոչ նոյնիսկ թօրիների կողմից և տապալվում է։ Սակայն Գլադստօնը սպիտակ քուէ է տալիս այդ ռէֆօրմների համար այն յուսով, որ աղատամիտ կը յաջողէ ուզուել նրանց թերութիւնները։ Նրա յոյսերը չեն արդարանում, որովհետեւ Դերբիի մինիստրութիւնը, ստանալով ձայնների փոքրամասնութիւն, ստիպված է լինում հրաժարական տալ։

Կազմվում է նոր կարինէթ, և Գլադստօնը դարձեալ

Հրաւիրվում է ֆինանսների մինիստր: Դառնալով այս անգամ զուտ ազատամտական կարինէթի անդամ, նա մի տատիճան ևս զրկվում է կղերականների և արխտօկրատների համակըրութիւնից: Օքսֆորդի համալսարանը տատանվում է նրան նորից ընտրել իւր ներկայացուցիչ, և 1859 թ. Եպինքուրպի աղատամիտ համալսարանը ընտրում է նրան պատուաւոր վերատեսուչ:

Սյսպէս թէ այնպէս, Գլագոտօնը, իրքի ֆինանսների մինիստր, նորից մեծամեծ ծառայութիւններ է մատուցանում իւր հայրենիքին հետզհետէ բարձրացնելով նրա նիւթական վիճակը: Ի միջի այլոց, նա տնտեսական քաղաքականութեան մէջ ուղում է ներմուծել երկու նորութիւն: Առաջինը, նա առաջարկում է նապօլէօնի կառավարութեան հետ հաստատել առկարական գաշնագրութիւն: Երկրորդը, պահանջում է տպագրական թուղթը աղատել որ և է հարկից, որ նշանակում էր կրթութիւնը աղատել հարկից և գրականութեան ու մամուլի տարածումը տասնապատկել: Հարկաւ այս վերջին առաջարկութիւնը թշնամութիւն է գրգռում խաւարամիտների և գրականութեան ու մամուլի մենալաճառների բանակում: Բայց յաղթութիւնը, վերջ ի վերջոյ, մնում է Գլագոտօնի կողմը:

Իւր զործունէութեան այդ շրջանում, որ տեսում է 1859 թ. մինչև 1865 թ., Գլագոտօնը օրից օր դառնում է հասարակ ժողովրդի համակրելին: Անգլիական ամբոխը սկսում է գնահատել և սիրել այն մարդուն, որի մինիստրութեան միջոցին Սնգլիան ոչ միայն մի կողէկ անգամ պարտք չի անում, չը նայելով Արքիմի պատերազմին, այս հետզհետէ սակաւացնում է տէրութեան հին պարտքերը: Տասը տարուայ ընթացքում (սկսած 1850 թուականից) ապկային պարտքը պակասում է 700 միլիոն բուբլու չափ, իսկ վոխառութիւնների համար վճարելիք տոկոսիները պակասում են տարեկան 60 միլիոն բուբլու չափ: Եւ այդ բոլորի հետեանքն այն է լինում, որ 1864 թ. հարկերի քանակութիւնը պակասում է 60 միլիոն բուբլու չափ: Գլագոտօնի քաղաքական թշնամիները իրանց ձայնը կտրում են, և նրա հուշակը օր օրի վրա մեծանում է:

Զարմանալի է այն հանգամանքը, որ Գլագոտօնի պէս մի պայծառամիտ մարդ երբեմն երբեմն է զալիս իքք բռնութեան և խաւարի կողմնակից: Մենք տեսանք, թէ նա ինչ պահպանողական դիրք էր բռնել Արևելեան Հնդկաստանի ստրուկների աղատութեան խնդրում: Բայց այդ նրա քաղաքական գործունէութեան առաջին տարիներումն էր: Այժմ, երբ նա անջատվել էր միանգամայն պահպանողականների բանակից, այժմ սկզբից և եթ Ամերիկայի Հարաւային ու Հյուսիսային նահանգների պատերազմում բռնում է հարաւայինների կողմը, հրավարակօրէն պնդելով, թէ Հարաւը ինքը կամաւորապէս կարող է աւելի գիւրութեամբ ոչնչացնել ստրկութիւնը, քան Հյուսիսի ստիպմամբ:

Գլագոտօնի այս բացարձակ կարծիքը, հարկաւ, վատ տպաւորութիւն է անում աղատամիտ ամերիկացինների վրայ: Ապագայում նա խոստովանում է իւր աններելի սխալը, բայց այսու ամենայնիւ բիթը՝ մնում է նրա անուան վրայ: Մինչդեռ հէնց նոյն միջոցներին նա անզլիական պարլամենտում հանդիսանում է ժողովրդի նսեմացած մեծամասնութեան կողմնակից, պաշտպանելով այն միտքը, թէ բանւոր դասակարգն ևս պիտի ընտրողական իրաւունք ունենայ: Ահա ինչ է ասում նա այդ ժամանակ. «Նրանք, որ բանւոր դասի ⁴⁹/₅₀ մասը զրկում են քաղաքական իրաւունքներից, պարտաւոր են ապացուցանել այդ դասի անընդունակութիւնը: Խոկ իմ կարծիքով, ամեն մարդ, եթէ նա զերծ է առանձին վատ յատկութիւններից, բարոյական իրաւունք ունի երկրի սահմանադրութեամբ օգտվելու»: Հարց. ինչո՞ւ այդ լուսամիտ մարդը չէր համակրում հյուսիսային ամերիկացիններին, որ զէնք էին բարձրացրել իրանց հարաւային եղբայրակիցների դէմ՝ ստրկութիւնը ջնջելու նպատակով: — Որովհետեւ ամենապայծառ մտքերն անգամ երբեմն պղտորվում են, որովհետեւ չը կայ աշխարհի երեսին անսիսալ մարդ:

Սյն օրից, երբ Գլագոտօնի հայեացըները սկսում են փոխվել, Անգլիայի կղերական դասը, հարկաւ, սկսում է նրա վրայ ծուռ աշքով նայել: Հետեանքն այն է լինում, որ

1865 թուականի ընտրութիւններին կղերական Օքսֆորդը բացարձակ վճռում է չընտրել այլ ևս Գլագոտօնին իւր պատգամաւոր: Եւ նշանաւոր քաղաքական գործիչը, երկրի ամենաառաջին ֆինանսիստը ընտրութիւնների վերջին պահուն ստիպում է իւր թեկնածութիւնը դնել Մանչեստերում և Լիվերպուլում, ուր և ձայների մեծամասնութեամբ ընտրվում է պատգամաւոր:

Սյժմ նա վերջնականապէս զրկված կղերականների և արխտօկրատիայի պաշտպանութիւնից ու համակրութիւնից, հարկաւ, պիտի դիմէր դեմօկրատիայի օգնութեանը: Այդպէս էլ լինում է: Շուտով Գլագոտօնը դառնում է բուն ժողովրդի սիրելի ներկայացուցիչը: Պարլամենտում նա հանդիսանում է բանտորների իրաւունքների առաջին պաշտպանը: Առաջին անգամ դառնալով համայնքների պալատի գեկավար, նա բանոր դասի օգտին արտասանում է ոգեորված ճառեր:

Սյդ ժամանակ Պալմերստօնը մեռած էր և նրա տեղը առաջին մինխտրն էր Թօսսելը, որ նոյնպէս աղատամիտ բանակին էր պատկանում: Սյդ Թօսսելը պարլամենտին առաջարկում է վերին աստիճանի սահմանափակ բիշը բանտորների ընտրողական իրաւունքների մասին: Սակայն այդ էլ չի ընդունվում, չը նայելով Գլագոտօնի ջերմ պաշտպանութեանը: Աղատամիտ կարինէթը ստիպվում է Հրաժարական տալ: Այստեղ Գլագոտօնը դառնում է օրուայ հերոս: Հրաժարականի օրը 10,000 բանտորներ հաւաքվում են նրա տան առջև և պահանջում, որ նա իւր ընտանիքի հետ զուրս գայ պատշզամբ և մի քանի խրախուսական խօսքեր ասէ: Երկրում սկսվում է մի նոր և այս անդամ աւելի զօրեղ շարժում բանտորների օգտին...

Երկու տարի անցած, այն է 1868 թ., Գլագոտօնը համայնքների պալատին առաջարկում է՝ Իրլանդիայում գտնալով

բոլոր կրօնական դաւանութիւններին անխտիր զրկել պետական օժանդակութիւնից և ժողովնել, որ այդ դաւանութիւնների եկեղեցիները կառավարվեն իրանց ծխականների կամաւոր տուրքերով: Այսպիսով նա նպատակ է ունենում պետական—բողոքական եկեղեցու ոյժը թուլացնել մի երկրում, ուր բողոքականների թիւը կազմում էր ամբողջ ազգաբնակութեան $\frac{1}{10}$ մասը և ուր նրանք վայելում էին առանձին արտօնութիւններ հակառակ կաթոլիկների, որոնք կազմում էին ազգաբնակութեան $\frac{9}{10}$ մասը:

Դա մի քայլ էր, որ պիտի Իրլանդիայում պատրաստէր հոգ՝ աղքագայ աւելի նշանաւոր ոչֆորմների համար: Պարլամենտում այդ առաջարկութիւնը ընդունվում է 65 ձայների առաւելութեամբ:

Նոր ընտրութիւններին Գլագոտօնը իւր թեկնածութիւնը վնաս է արգէն Գրինիչում, որովհետեւ այլ ևս չի կարող ընտրվել Մանչեստերում ու Լիվերպուլում, որ չափից զուրս բողոքական էին և չին կարող Գլագոտօնին ներել, որ ձգտում էր ոչնչացնել պետական եկեղեցու ոյժը: Գլագոտօնը ընդունվում է Գրինիչում փառաւոր կերպով: Այդ միջոցին նա հրատարակում է մի նոր բրօշիւր, ուր բացատրում է, թէ ինչու փոխեց իւր հայեցքները պետական եկեղեցու մասին:

Սյժմ Գլագոտօնը դարձեալ համայնքների պալատի գեկավար է: Երբէք հանգամանքները այնքան նպաստաւոր չէին եղել, որքան այժմ նրա գործունէութեան համար: Պարլամենտում նա ունէր 115 ձայների առաւելութիւն, որ կարծես, ընտրված է յատկապէս Գլագոտօնի ոչֆորմները պաշտպանելու համար: Գալով մինխտրների կարինէթին, նա ևս բաղկացած էր արմատական և աղատամիտ կուսակցութեան ամենաընդունակ և անկեղծ անդամներից:

Մինչ այս մինչ այն, բողոքականութիւնը Իրլանդիայում բորբոքվում է Գլագոտօնի նորմուծութեան դէմ: Նրա ձայնին ձայնակցում էին ամբողջ Անգլիայի հոգեոր զասը և պահպանողական բանակը: Գլագոտօնը ենթարկվում է կատաղի յարձակումների: Նա համարվում է զաւածան, մատնիչ, կողոպտիչ,

որ իւր ձեռքը բարձրացնում է աստուածային եկեղեցու դէմ։ Եսկ գաւառներում նրան համարում են սատանայի գործիք, որ վճռել է ոչնչացնել բողոքական եկեղեցին։ Ահա հէնց այդ կատաղի յարձակումների և զոռում-գոշիւնների ժամանակ (1869 թ.) է Գլագուտօնը առաջ բերում իւր բիլլը բողոքական եկեղեցու մասին։ Երեք ժամ տևած մի ճառում նա աշխատում է ապացուցանել, որ իւր առաջարկած միջոցները ոչ միայն մաղաշափ անդամ չեն վնասիլ բողոքական եկեղեցու շահերին, այլ և կօգնեն նրանց, միևնոյն ժամանակ ձգելով խաղաղութիւն Երլանդիայի ազգաբնակութեան մէջ։

Եւ, չը նայելով լորդերի, թօրիների, հոգհորականութեան սոսկափի ընդդիմութեան, բիլլը ընդունվում է և օրէնք դառնում։

Գլագուտօնի համոզմամբ Երլանդիայի կեանքը թունաւորվում էր երեք բաներից—պետական եկեղեցուց, հոգատիրութեան սիստեմից և ժողովրդական կրթութեան եղանակից։ Պետական եկեղեցու ոյժը նա ջնջեց, այժմ պէտք էր զիմել միւս երկու չարիքների վերացման։ Գլագուտօնը առաջարկում է սահմանափակել Երլանդիայում հոգատէրերի իրաւունքները, թելթեացնելով գիւղական երկրագործ դասի հողային կապաւութեան պայմանները։

Օգոստոսի 1-ից նրա այս առաջարկութիւնը դառնում է օրէնք։ Նոյն միջոցին Ս.նդլիայի ժողովրդական լուսաւորութեան մինիստր և Գլագուտօնի ընկեր Ֆօրստրէմը պարլամենտին ներկայացնում է ժողովրդական կրթութեան սիստեմի փոփութեան ծրագիրը։ Այս ծրագրով պահանջվում է, որ կրթութիւնը պարտաւորական լինի, կրօնի դասաւութիւնը ազատ։ Ծրագիրը ընդունվում է, և այժմեան անդլիական ժողովրդական պարտաւորիչ կրթութեան սիստեմը նրա իրագործումն է։

Յաջորդ տարին իրագործվում է Գլագուտօնի մի ուրիշ, ոչ պակաս նշանաւոր, ծրագիրը։ Մինչև այդ ժամանակ անդլիական բանակներում զինուորական պաշտօնները վաճառվում էին զրամով։ Այսպէս, օրինակ, գնդապետի պաշտօնը արժէր մոտ 100—150 հազար բուրլի։ Հետեարար այս տեսակ և

ուրիշ աւելի կամ պակաս պատասխանատու պաշտօններ ստանում էին ոչ թէ արժանաւորները, այլ նրանք, որ փող ունէին և, ի հարկէ, մեծ մասամբ արխատօկրատները։ Նոր ծրագրով արգելվում է պաշտօնների վաճառումը և որոշում է միայն անհրաժեշտ հարցաքննութիւններից յետոյ կամ համաձայն պաշտօնների նախընթաց ծառայութեան՝ տալ այդ պաշտօնները։

Նոյն միջոցներին արտարին քաղաքականութեան մէջ առաջանում են նշանաւոր գործեր, ուր Գլագուտօնը պիտի ցոյց տար իւր ձիւքը։ Սակայն այստեղ նա շատ էլ մեծ յաջողութիւն չի ունենում։ Ծագում է ֆրանս-պրուսական պատերազմը։ Գլագուտօնը հազիւ հազ կարողանում է Ս.նդլիային չէզոք դիրքում պահէր։ Եսկ երբ Ուսասատանը, օգտվելով այս պատերազմից, հրաժարվում է Պարիզի գաշնադրութեան կէտերը կատարելու պարտականութիւնից, Գլագուտօնը անհնարին է համարում միայնակ դիմադրել այս բանին և համաձայնում է Լօնդօնում կայացնել միջազգային կօնֆերենցիա։ Վերջինը վճռում է Ուսասատանին ազատել Սկ ծովի վերաբերմամբ չէզոք դիրքի մէջ մնալուց և Բուֆօր մտնելու արգելքից։

Սյս հանգամանքը զէնք է տալիս Գլագուտօնի թշնամիներին, որոնք ոկտում են մեղագրել նրան, թէ բաւականաշափ հայրենասէր չէ։ Առհասարակ, այդ և մի քանի ուրիշ աւելի լուրջ լինդիրներ, որոնց վերաբերմամբ պարզվում է Գլագուտօնի թուլութիւնը արտարին քաղաքականութեան մէջ, բաւական վնասում են Գլագուտօնին։

Նրա ժողովրդականութիւնը ենթարկվում է վտանգի։ Բլանխիզում նրա ընտրողները կազմում են մի գեմօնստրացիա, պահանջելով, որ նա հրաժարվէ իւր պաշտօնից։ Վալժառնամեայ ծերունին ինքն աներկիւզ զալիս է Բլանխիզ և 20,000 ամբոխի վէմուգէմ կանդնած մի երկար ատենաբանութեամբ քայլ առ քայլ պաշտպանում է իւր վերջին տարիների քաղաքականութիւնը։ Նրան հանդիպում են սուլոցներով, զոռում—գոշիւններով, բայց երբ համարձակ հոկտօրը շարունակում է իւր ճառը անխոռվ

և լողների միտքը գրաւում, բողոքողների թիւը պակասում է այնքան, որ ճառի վերջում ամբոխի թշնամական ցոյցերը փոխվում են զերմ համակրական ցոյցերի:

Գլագոտօնը Բլանսիգում յաղթող է հանդիսանում և տրիումֆով վերադառնում է Լոնդոն: Սակայն հայրենիքի աչքում նա դեռ չի կարողանում իրան բարձրացնել: Շատերը սկսում են միանգամայն թերահաւատութեամբ վերաբերվել նրա բոլոր ծրագիրներին, որոնցից մի քանիսը տապալվում են պարլամենտում:

Վերջապէս, 1874 թուականին Գլագոտօնը վճռում է պարլամենտը լուծել և նոր ընտրութիւններ նշանակել: Պալինում է նրա կեանքի ամենաատխուր ժամանակամիջոցը: Հասարակական կարծիքը թշնամանում է նրան: Նա մ'նում է մենակ: Պատճառը մասամբ ինքն է լինում: Իբրև մարդ, Գլագոտօնը որքան ևս աղնիւ է, պարզասէր և ուղղամիտ, նոյնքան անհիւրնեկալ է: Նա չի կարողանում սիրալիր լինել իւր բարեկամների հետ, երբեմն մինչև անգամ հրում է նրանց իւր չոր ու ցամաք պաշտօնական յարաբերութեամբ:

Սկսվում են նոր ընտրութիւնները, և ծերունի գործիչը, մոռանալով իւր դիրքը, տարիքը, հոչակը, պատանեկան եռանդով ձգում է իրան ընտրողական պայքարի մէջ: «Նա վագում է Գրինիչից Բլանխիդ, Բլանխիդից—Վուլիչ և յետոյ Նիւ—Կրօսի,—ասում մի ժամանակակից,—մի խօսքով ամեն տեղ, ուր կարող է զտնել մի գատարկ տակառ, որպէս զի բարձրանայ նրա վրայ և ճառախօսէ»:

Եւ ի՞նչ: Այս բոլորից յետոյ նա ընտրվում է երկրորդ թեկնածու: Առաջինը լինում է մի օպիի գործարանատէր: Վերջապէս, նա առ ժամանակ հեռանում է քաղաքական ասպարիդից և երկու տարի անց է կացնում իւր ընտանիքի շրջանում, Հօվարդէն կալուածում: Այդ ժամանակ նա հրատարակում է իւր երկրորդ աշխատութիւնը Հոմերոսի մասին, գրում է յօդուածներ ու բրօշիւններ, որոնք հարիւր հաղար օրինակներով են տարածվում:

Մինչ այս մինչ այն, ծագում է ոռւս-տաճկական պատերազմը: Սրեելեան քրիստոնեաների դժոխային վիճակը չէր կարող հանգիստ թողնել Գլագոտօնին: Նա 1876 թ. սեպտեմբերին հրատարակում է իւր «Քոլղարական սարսափները և արեելեան խնդիրը» վերնագրով բրօշիւրը, ուր նա ապացուցանում է, թէ Սնովիան պարտաւոր է Բալկանեան թերակղզու ժողովրդների պաշտպան հանդիսանալ Ուստիայի և ուրիշ պետութիւնների համաձայնութեամբ:

Բրօշիւրը շուտով սպառվում է: Գլագոտօնը դրանով չի բաւականանում: Նա սկսում է բերանացի ագիտացիա, կազմում է միտինդներ, գրում է յօդուածներ, նամակներ, և այստեղ նա ունենում է ահազին յաջողութիւն: Նա բողոքում է Սնովիայի սառնասրտութեան դէմ: Նրա ժողովրդականութիւնը նորից բարձրանում է և հասնում այն աստիճանին, որին երբէք մինչև այդ ժամանակ չէր հասել: Սկսվում է մի ճիշտ գլագոտօնեան շարժում: Թշնամիները յարձակվում են նրա վրայ պարլամենտում, իսկ փողոցում փշրում են նրա տան լուսամուտները և դռները, կողմնակիցները համարում են նրան ազատարար, զալիս են խմբերով նրան երկրպագելու: Խոկ նա ովերիված շարունակում է իւր մարգասիրական քարոզչութիւնը մեծ մարգուն յատուկ ինքնափստահութեամբ:

Զը նայելով, որ Գլագոտօնի պրօպագանդան Բալկանեան թերակղզու քրիստոնեաների օգտին արժանանում է անդիմական հասարակութեան համակրութեանը, նրան չի յաջողվում պարլամենտին ընդունել տալ իւր առաջարկութիւնը—ճնշում գործել Տաճկաստանի վրայ: Պատճառն այն էր, որ անգլիացիները չէին համակրում Ուստաստանին, իսկ կառավարութիւնը, նեղ ազգասիրութիւնից զրդված, մինչև անգամ տրամադիր էր պաշտպանել Տաճկաստանին մի քրիստոնեայ ազատարար պետութեան դէմ: Բայց և այնպէս, Գլագոտօնի շնորհով էր, որ Ուստաստանի ու Սնովիայի մէջ պատերազմ չը ծագեց: Երբ Բիկօնսֆիլդը և Սոլզբիրին, Բերլինի վեհաժողովից վերադառնալով, յայտարարեցին, թէ իրանց հետ բերել են «խաղաղութիւն պատուի հետ», Գլագոտօնը բացարձակ հերքեց վերջինը,

այն է, թէ իրը Անգլիան պատուով դուրս եկած լինի այդ վեհաժողովից: Նա ցոյց տուեց Անգլիայի ներկայացուցիչների տղեկ արարքները, որ չէին կարող վայել լինել մի զօրեղ պետութեան ներկայացուցիչներին:

Յաջորդ ընտրութիւնները, որ կայացան 1880 թուականին, փոթորկալից էին: Այս անգամ՝ Գլազուոնը իւր թեկնածութիւնը գրեց Շոտլանդիայում, ուր նրան դիմաւորեցին ովերութեամբ և ահազին համակրական ցոյցերով: Նա ընտրվեց ոչ միայն Շոտլանդիայում, ուր ներկայ էր, այլ և Լիդսում, ուր բացակայ էր: Առ հասարակ այս անգամուայ ընտրութիւնները ազատամիտ բանակի համար եղան յաջող: Եւ ոչ ոք չէր կասկածում, թէ սրա զվասար պատճառը Գլազուոնն էր: Ահա ինչու նոր կարինէթ կազմակերպելը նրան յանձնվեց:

Այժմ Գլազուոնը պէտք է երկու նշանաւոր խնդիրներ լուծէր—զցել Իրլանդիայի աղջաբնակութեան մէջ խաղաղութիւն և աւարտել Բալկանեան թերակզբու դժուար գործերը:

Իրլանդիայում 1879 թուականից ծագել էին նոր խոռվութիւններ: Հացի պակասութեան պատճառով գիւղական դասը այնքան աղքատացել էր, որ անկարող էր հարկ վճարելու: Հողատերերը արտաքսում էին գիւղացիներին իրանց հողերից: Հաղարաւոր ընտանիքներ մնացել էին ոչ միայն առանց մի կտոր հացի, այլ և անտուն, անօգնական: Ճիշտ այդ ժամանակ էր, որ Պարնէլը և Դէվիդը կազմեցին «Հողացին լիգան»:

Գլազուոնը պէտք է պարզամենափայց ձեւը բերէր միջոցներ, որոնք կարողանային գոհացնել Իրլանդացիներին: Նա առաջարկեց—ընդարձակել Իրլանդիայում պետական բարեգործութիւնը և սահմանափակել կարուածատէրերի իրաւունքը՝ իրանց հողերից գիւղացիներին վռնղելու վերաբերմամբ:

Սուածին միջոցը ընդունվեց: Երկրորդին ընդդիմացան լորդերը: Դժբաղաբար, գործերի այդ խառն ժամանակ Գլազ-

ստօնը հիւանդացաւ և հարկադրվեց գնալ մի ծովեղբեալ տեղ: Վերադառնալով Լօնդոն 1883 թուականի սկզբին, նա լորդերի հետ վարեց երկար պայքար և, վերջապէս, կարողացաւ ընդունել տալ մի նշանաւոր օրէնք: Այս օրէնքով ոչ միայն քաղաքացի այլ և գիւղացի տնատէրերին ընտրողական իրաւունք էր տրվում, մի օրէնք, որով ստեղծվեց մօտ 2.000.000 նոր ընտրողներ: Բացի գրանից նա հիմնեց Լօնդոնի քաղաքացին խորհրդարանը:

Գալով արտաքին քաղաքականութեան, Գլազուոնին է պատկանում Բերլինի գաշնադրութեան քանի մի կարեոր յօդուածների իրադորձման պատիւը: Սրանց թւումն են. Գուլշինիոի Զերնօգօրիային յանձնվելը և Յունաստանին մի քանի նոր կալուածներ աւելանալը: Բայց Գլազուոնը արտաքին քաղաքականութեան մէջ այս անգամ էլ մի քանի սխալներ գործեց: Սրանց թւումն են անգլիացիների պատէրազմները հարաւային Ս.քրիկայում բօէլների և Եգիպտոսում ժողովրդական շարժման և նրա պարագաների Ս.բարիի և Մահդիի հետ: Այս սխալները շատ վնասեցին Գլազուոնի կարինէթին, որը 1885 թւականին ստիպվեց հրաժարական տալ:

Այդ միջոցին Վիկտորիա թագուհին առաջարկեց Գլազուոնին կոմսի տիտղոս, բայց նա հրաժարվեց ընդունել:

Հետեւեալ, այսինքն 1886 թուականին Գլազուոնը կը կին կառավարութեան գեկին իւր ձեռքն է առնում: Այս անգամ նա իւր պաշտօնավարութեան զվասար նպատակն է գնում—տալ Իրլանդիային ինքնավարութիւն և գիւղական հողերը անցկացնել տէրութեան ձեռքը: Նրա կարծիքով, միայն այս երկու միջոցները կարող էին իրլանդացիներին հաշտեցնել անգլիացիների հետ:

Սակայն անգլիական հասարակութիւնը և նրա ներկայացուցիչները տակաւին պատրաստված չէին այդ բանը հասկանալու: Ահա ինչու Գլազուոնը անաջողութեան հանդիպեց, չը կարողանալով ընդունել տալ իւր հոչակաւոր Հօմ-Թուլլը (Փրլանդական պարլամենտ): Ահա ինչու մինչև այսօր էլ Իրլան-

դիան կառավարվում է անգլիական ոստիկանի և զինւորի ձեռքով:

Մօտ եօթանասուն տարի է Գլադստոնը կանգնած է Անգլիայի քաղաքական հորիզոնի վրայ, ինչպէս մի պայծառ աստղ: Այդ երկար տարիների ընթացքում այդ պայծառ աստղի վրա շատ քիչ անգամ և շատ կարճ ժամանակ են մթին կէտեր երեացել, այնուհետև նա միշտ փայլել է մաքուր:

Գլադստոնը, մի կողմից, գործել է իւր հայրենիքի համար, միւս կողմից աշխարհի գրեթէ բոլոր ճնշված և տառապող աղպերի ու ժողովրդների օգտին: Ամեն անգամ երբ աշխարհի այս կամ այն կողմից լսվել է բոլոր քաղաքական բռնութեան դէմ, ամենից առաջ այդ զգայուն ծերունին է պաշտպանութեան ձայն բարձրացրել հալածվողների համար:

Մի կողմ թողնելով առաջին տարիները, Գլադստոնի ներքին գործունէութիւնը միշտ ունեցել է մի հիմնաքար, մի իմաստ—թուլացնել անգլիական արխատօկրատիային և գորեղացնել ժողովրդական իրաւունքները: Նրա զվասաւոր յատկանիշը, նրա քաղաքական տաղանդի պէտք հէնց այն բանի մէջ է եղել, որ միշտ կարողացել է ժամանակին գուշակել ժողովրդի պահանջները և ձայնակից լինել նրա ձայնին: Այս բանի համար նա չի խնայել ոչինչ—ոչ ինքն իրան, ոչ իւր կուսակցութիւնը և ոչ մի հասարակական դաստկարգի նախապաշարմունքները: Երբ մի միտք նրան յափշտակել է, նա ինչպէս ճշմարիտ գաղափարական մարդ մոռացել է ամեն ինչ և շատ անգամ իւր գաղափարը իրազործելու համար գարձել է անհամբեր, բռնակալ և խստասիրտ: Խւրաքանչիւր գաղափար նա պաշտպանել է միայն այն ժամանակ, երբ միանգամայն համոզված է եղել, թէ նա արդար է և անսխալ: Երբէք չի խառնվել այն գործերի մէջ, որոնց վերաբերմամբ հաւատ չի ունեցել: Սխալ գործելիս խոստովանել է իւր սխալը և շտապել ժամանակին հրաժարվել իւր սկսած ձեռնարկութիւնից:

Գլադստոնը արդարացի, անկեղծ և բարեխիզ է եղել նոյն

իսկ իւր հայրենիքի թշնամիների վերաբերմամբ: Շատ անգամ է նա պաշտպանել Ծուռաստանին, երբ նկատել է, որ արդարութիւնը վերջինի կողմն է: Փոքր տէրութիւնների վերաբերմամբ նա միշտ պահանջել է—վարվել նրանց հետ մեղմ և մարդասիրաբար: Նա չի խնայել իւր հայրենակիցների նեղ աղղասիրական թուլութիւնները և այս պատճառով շատ թշնամիներ է ձեռք բերել և իւր վարկը թուլացրել նոյն իսկ բարեկամների աշքում: Մարդասիրական և արդարագատութեան զգացումը նրա մէջ միշտ եղել է գորեկ նեղ հայրենասիրական զգացումից:

Զարմանալի է Գլադստոնի աշխատասիրութիւնը: Նա ոչ մի բապէ ապարդին չի կորցնում: Դեռ ուսումնարանական նոտարանի վրայ իւր աշխատասիրութեամբ նա հաւասար ընկեր չուներ: Ֆինանսների մինիստր եղած ժամանակ նա իւր բիւզները կավալում էր ոչ միայն տաղանդաւոր կերպով, այլ և վերին աստիճանի մանրամասն: Պարլամենտի նիստերին մինչեւ խորին ծերութիւն նա երիտասարդ պատվամաւորներից աւելի երկար ժամանակ է նստել: Նամակներ գրելը նրա սովորական զբաղմունքն է պարլամենտում: Միայն շատ կարեոր խնդիրներ վճռվելիս նա միանդամայն իւր բոլոր ուշադրութիւնը նուիրում է խօսողներին: Միւս գէպքերում նա թէ լսում է և թէ գրում: Սակայն ոչ մի սխալ չի խուսափում նրա լսոգութիւնից: Բաւական է, որ մի որևէ հոգտօր ուղիղ հասկացած չը լինի նրա խօսքերը, և ահա ծերունին զլուխը բացասարար շարժում է, ակնոցների տակից հարցական հայեացք ձգելով հոետօրի վրայ:

Տանը եղած ժամանակ նոյնպէս Գլադստոնը ոչ մի բապէ ապարդին չի կորցնում: Նա պառկում է ընելու գիշերուայ 11—12 ժամին և զարթնում է 7—8 ժամին: Ամեն առաւօտ նա զնում է իւր եկեղեցին, որքան ևս եղանակը վատ լինի: Գրեթէ ամեն օր նա գնում է Հօվարդէնի շրջակայ ծառաստանը և այստեղ կացինը ձեռին աշխատում: Այս մասին պատ-

մում են շատ անելզօտներ: Ասում են, օրինակ, որ միանգամ մի գաւառացի Հօվարդէն է գալիս Գլադստոնին երկրպագութիւն տալու: Ծառաստանով անցնելիս նա հանգիպում է մի ինչոր ծերունու հասարակ շապկով և մի ոռվորական խօսք է ասում նրան եղանակի և նրա աշխատութեան մասին: Յետոյ գաւառացին հարցնում է ծերունուց, արգեօք կարմր է ինքը Գլադստոնին տեսնել: Անտառի ծերունի բանորը, որ ինքը Գլադստոնն է լինում, ցոլց է տալիս իւր բնակարանը:

Գլադստոնը հարուստ չէ: Նրա Հօվարդէն ամրոցը և նրա շրջակայ հողերը պատկանում են նրա զաւակներին, այնպէս որ ինքն ապրում է իւր թօշակով: Մի քանի տարի սրանից առաջ նա յայտարարեց, թէ միջոցները չեն ներում բոլոր իւր նամակները փակ ծրարներով ուղարկել: Սյնուհետև «Գլադստոննեան պօստային տոմսակները» գարձել են բերանի խօսք, այնքան հռչակաւոր ծերունին շատ է ուղարկում այդ տոմսակներից: Նրա նամակները, արգարի, թիւ չունին: Նա պատասխանում է ամեն մեկին, ով ես զրէ նրան: Մի անգամ մի զպրոցական աշակերտ Գլադստոնի աշխատասիրութեան մէջ զտնում է Հօմերոսի տեկստում մի ինչ որ սխալ և նամակով այդ մասին նրան հագործում: Գլադստոնը անմիջապէս պատասխանում է զպրոցական աշակերտին, խոստովանելով իւր սխալը:

Գլադստոնի ժողովրդականութիւնը շափ ու սահման չունի: Երբեմն ամառը Հօվարդէնի ծառաստանն են գալիս միմեանց ետից 100—200 հոգուց բաղկացած խմբեր՝ յատկապէս հռչակաւոր ծերունուն տեսնելու և նրանից մի քանի խօսք լսելու: Սյեկու խմբերի թիւր այնքան մեծ է, որ յաճախ երկաթուղու մօտակայ կայարաններում յայտարարութիւններ են քաշ տրվում, թէ Հօվարդէնի ծառաստանում զրոսանքի գալլ այս ինչ ժամանակից յետոյ արգելված է: Գրանով միայն միջոց է արվում մեծանուն ծերունուն հանգիստ զրունել, ոգ չնշել և ծառեր կտրել:

Գլադստոնը վերին աստիճանի կրօնասէր է և համարվում է Անգլիայում առաջին աստուծաբանը: Օքսֆորդի համալսարանը աւարտելուց յետոյ նա մինչև անգամ մտադիր էր հոգեորական

ձեռնադրվել, և միայն հօր ցանկութիւնը յետ կանգնեցրեց նրան այդ մտադրութիւնից: Սակայն Գլադստոնի կրօնասիրութիւնը հետևանք է այն մաքուր քրիստոնէական և բարձր մարդասիրական ոգուն, որով տողորված է նրա ամբողջ բարոյական աշխարհը: Նա բառի բուն նշանակութեամբ քրիստոնեայ է և ոչ մոլեռանդ կրօնամոլ...



3564
3565
3566
3567
3568
3569

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0495417

ՀՀ Ազգային գրադարան



NL0495412

ՀՀ Ազգային գրադարան



NL0495410

ՀՀ Ազգային գրադարան



NL0495408

ՀՀ Ազգային գրադարան



NL0495407

ՀՀ Ազգային գրադարան



NL0495406

